ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՇՈՒԵԿԵՇԻՌ

Համառօտապէս կազմեալ վասն մտից և ծախուց Ախալցխայի ս. Փըրկիչ եկեղեցւոյ յընթացս 1892 *ամի.*

ՄՈՒՏՔ

	Ր.	Կ.
Մայր գումար մնացեալ յանցեալ 1891 թ.	»	26
Տոկոսիք մայր գումարի	»	»
Վարձ եկեղեցական կալուածոց	1515	5
Ի վաճառմանէ ամբողջ մոմոց	3710	57
Արդիւնք վաճառեալ կիսայրեալ ապիտակ և դեղին մոմոց	22	18
Գանձանակ ժողովեալ յանուն եկեղեցւոյ	134	50
Լուսագինք մկրտութեանց և պսակաց վարձ ջահից և թագից	50	»
Վարձ գիազարդի և դագաղատեղանոյ	9	»
Խաչահամբոյր և վարագոյր բացէք	»	»
Խաչահամբոյր սրբոց մասանց	34	68
Նուիրագրամբ յանուն եկեղեցւոյ	18	58
Ի վաճառմանէ մորթոյ մատաղեաց	»	»
Պատահական եկամուտներ, այսինքն հին կտոր փայտեր, կտոր թոքմաներ, փայտէ խողովակներ, երկաթից շրջակապեր (обручъ) ծախելուց և այլն	42	43
Ընդհանուր մուտքի գումարն 1892 թ.	5567	45

ԾԱԽՔ

	Ր.	Կ.
Գին վաճառելի ամբողջ սպիտակ և գեղին մեղրամոմից	1375	37
Գին կիսայրեալ սպիտակ մոմից գործածելոց ի պէտս լուսաւորութեան	»	»
Ոսկիկ լուսարարի	276	»
Ոսկիկ ժամակոչի.	96	»
Ոսկիկ եկեղեցական սպասաւորաց (դպրաց) . .	360	»
Նպաստ ծխական ուսումնարանին . . .	»	»
Մանր ծախք վասն ածխոյ ջրոյ և այլն . .	11	3
Ցնահարկ վճարեալ քաղաքային վարչութեան վասն եկեղեցական կալուածոց և ընկերութեան վասն ապահովելոյ նոյն կալուածոց ի հրդեհէ . .	158	32
Գին իւղաբերից կերոնաց	»	»
Վասն նորոգ գնեալ եկեղեցական իրեղինաց. .	39	40
Ամբողջ և կիսայրեալ մոմք գործածեալ վասն լուսաւորութեան	»	»
Ծախք արարեալք հրամանաւ թեմական իշխանութեան	38	40
Ոսկիկ գիշերապահի	96	»
Վասն նորոգութեան և կարկատանաց եկեղեցւոյն .	45	35
Տասանորդ ժամահարին ծախած մոմերուն . .	147	28
Վասն նորոգութեան և կարկատանաց եկեղեցական. կալուածոց	2813	71
Ընդհանուր գումար ծախուց 1892 թ.	5555	86

Ծանօթութիւն. 1, Անցեալ 1891 թուականից մնացեր էր 26 կոպ. նոյն 1892 թուականին եղել է մուտք 5567 ռուբ. 19 կոպ. իսկ ծախք 5555 ռուբ. 86 կոպ. ծախսը հանելով մնացորդից և մուտքից կմնայ առ մէկն Յունուարի 1893 ամի ընդամենը տասն և մէկ ռուբլի յիսուն և ինը կոպ. (11 ռ. 59 կ.) որը փոխադրուեցաւ 1893 թուականի մատեանի մէջ.

2, Անցեալ 1891 թուականից մնացեր էր անվաւ, թէ մոմ և թէ կերոններ 14 փութ 20 ֆունդ 36 զալաթ. ստացուեր է Տփխիսից, տուփերի միջից և լուսաւորեայից ետ եկած 85 փութ 9 ֆունտ 36 զալաթ. իսկ

ծախուեր է 84 փութ 3 ֆունդ 75 զալաթ. ծախսը հանելով մնացորդից և մուտքից կմնայ առ մէկն յունուարի 1893 ամի ընդամենը 15 փութ 25 ֆունդ 94 զալաթ. որը և փոխադրուեցաւ 1893 թուականի մատեանի մէջ։

3։ Անցեալ 1891 թուականից մնացեր էր կիսայրեալ մոմ և կերոններ 5 փութ 30 ֆունդ 69 զալաթ. ստացուեր է եկեղեցւոյ տուփերից։ ննջեցեալների։ պսակների։ և լուսաւորիչից յետ եկած 15 փութ. 33 ֆունդ 62 զալաթ. իսկ ծախսուեր է և ծախուեր է եկեղեցոյ համար 8 փութ 1 ֆունդ 39 զալաթ. ծախսը հանելով մնացորդից և մուտքից կմնայ առ մէկն յունվարի 1893 ամի 13 փութ 22 ֆունդ 92 զալաթ. որը և փոխադրուեաւ 1893 թուականի մատեանի մէջ։

Երեցփոխան Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցւոյ Հայոց.
Կոլլէժսկի Սովէթնիկ Տիգրան Տէր Միքայէլեանց։

ԹՈՒՉՔ ԵՒ ՃԱԽՐ.

Անցեալ տարուայ սեպտ. ամսում Լիւցերնում «Հին-կաթոլիկաց» եկեղեցական ընդհանուր ժողով տեղի ունեցաւ։ Այդտեղ էր և Թէոդոր Իսահակ։ նախկին «Հայաստանեայց եկեղեցի» ամսագրի խմբագիրն. որ Երուսաղէմի ուսուցչութիւնը թողնելով՝ գնում էր Հնդկաստան՝ ի Կալկաթայ Անգլիական «Հայոց ճեմարանում (Armenian Academy) հայերէնի ուսուցիչ լինելու։

Ժողովում վճռուել էր մի եռամսագիր հրատարակելու։ որի առաջին համարը լոյս է տեսել. (էջ. 1—1<0. 8°) Revue internationale de théologie. ունի Ֆրանսերէն։ Գերմաներէն և Անգլիերէն յօդուածներ։ Նշանաւոր են պրոֆեսոր դոկտոր Ռայնկենս եպիսկոպոսի յօդուածն աշխարհիս արարչագործութեան վրայ։ որի թարգմանութիւնը կտանք «Արարատի» ընթերցողներին. պրոֆ. դոկ. Միշօ'ի La Théologie et le Temps prèsant. (աստուածաբանութիւնն և արդի ժամանակը)։ և այլն։ Վերջինս նա է։ որ ի Պարիզ Մատրլայն եկեղեցում բարձր պաշտօն ունէր։ սակայն պապի անսխալականութիւնը մերժելով եկաւ Բերն մոլորութեան դէմ գործելու։ Սորա մի հռչակաւոր հեղինակութիւնը լոյս տեսաւ ի Ս. Էջմիածին 1878-ին հանդուցեալ Այվազեան ուսումնասէր եպիսկոպոսի թարգմանութեամբ՝ «Թէ ինչպէս Հռոմէական եկեղեցին ոչ ևս է կաթուղիկէ եկեղեցի»։ որ վաղուց պէտք է վաճառուած պրծուած լիներ։

Ցիշեալ եռամսեայ հանդէսի գինն է 16 ֆրանկ տարեկան. հասցէ՝ M-r le Professeur Michaud, 17, rue d' Erlache. Berne (Suisse)։